

ԶԻՐԱՐ ՀԱՍԿԱԼ

Կարդա՛ Առակաց 16.16-22

Ամուսինի մը համար լաւագոյն ձեւերէն մէկը իր կինը սիրելու՝ զայն հասկնալն է: Պետրոս առաքեալ կ'ըսէ, թէ շատ կարեւոր է ամուսինի մը համար «Բնակիլ (իր կնոջ հետ) գիտակցութեամբ» (Ա. Պետ.3:7): Այս սկզբունքը գործնական է երկուստեք: Ամուսիններ ալ նոյնպէս կ'ուզեն հասկրցուիլ: Իսկութեան մէջ բոլորս ալ կ'ուզենք հասկցուիլ: Ամէն մարդ, ամուսնացած ըլլալ կամ ո՛չ, կ'ուզէ հասկցուած ըլլալ ուրիշներու կողմէ, որքան կարելի է խորապէս եւ ամբողջութեամբ: Բոլորս ալ այդ կարծիքով ծնած ենք եւ այնպէս կը թուի, թէ այդ պահանջը պիտի չչքանայ երբեք: Տկար եւ խոլսափոխական խօսք է ըսելը, թէ մենք զիրար չենք կրնար հասկնալ: Մենք կրնանք եւ պէտք է հասկնանք: Թերեւս այդ մէկը ժամանակի կը կարօտի: Ժամանակ՝ իրարու ներկայութեան մէջ գտնուելու, հարցումներ հարցնելու, զիրար ուշադրութեամբ մտիկ ընելու: Շատ պարզ է եւ նոյնպէս երբեմն շատ դժուար: Անշուշտ ոչ ոք կրնայ իր դիմացինին հոգիին խորհրդաւորութիւնը ամբողջութեամբ հասկրնալ: Սակայն կրնանք ամէն օր նոր բան մը սորվիլ: Իմաստուն առակագիրը հասկացողութիւնը կը կոչէ «կեանքի աղբիւր» (Առակ. 16:22), խորունկ իմաստութեան աղբիւր մը բոլոր անոնց համար, որ զայն կը փնտռեն: Հասկնալը ժամանակի կը կարօտի եւ ամենէն թանկագին նուէրներէն մէկն է, որ կրնանք ուրիշներու տալ: Որքան ժամանակ տրամադրելը մեր շուրջիներուն ցոյց կուտայ մեր գանոնք սիրելու չափը: «Մտիկ ըսելը բազորոհ մըն է շատուի շատը»:

ԽԱՆԱՓԱՅՏ



Խաչափայտ ըսելով կը հասկնանք փայտեղէն քառաթեւ այն շինուածքը, որուն վրայ Քրիստոս խաչուեցաւ: Նախնագոյն դարերուն իսկ, քրիստոնէական առաջին համայնքին մէջ Խաչափայտը եղած է ակնադիւր հաւատքի եւ պաշտամունքի գերագոյն նշան: Քրիստոնէական եկեղեցիները միշտ փորձած են Խաչափայտէն մասունք մը ունենալ, որպէս սրբութիւն, առհաւատչեայ հաւատքի եւ յատկապէս հիւանդներուն առողջութիւն պարգեւող գորութիւն: Հայ եկեղեցւոյ պարագային եւս, մեծ նշանակութիւն ունեցած է Ս. Սեղանին վրայ ունենալ Խաչափայտէն մասունք մը, որ ընդհանրապէս ցանկաւոր անօթի մը կեդրոնը, ապակիէ տուփի մը մէջ ամփոփուած կ'ըլլայ: Խաչափայտէն մասունք մը իր մէջ ամփոփող ցանկաւոր վարի կողմէ խողովականման կոթ մը կ'ունենայ... Շարունակելի



ԲՈՒ ԽՕՍԲԵՐ ԽՄ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԶ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023 ԹԻՒ 41

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 17.7-14: Բ. Կր. 13.5-13: Սր. 11.27-33

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 11.27-33

Յիսուս եւ իր աշակերտները դարձեալ Երուսաղէմ եկան: Մինչ Յիսուս տաճարին մէջ կը պտըտէր, իրեն մօտեցան քահանայապետները, օրէնքի ուսուցիչներն ու երէցները եւ հարցուցին. «Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ»: Յիսուս անոնց պատասխանեց. «Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ, թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը Աստուծո՞ւ տրուած էր իրեն՝ թէ մարդոցմէ: Պատասխանեցէ՛ք տեսնեմ»: Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել. «Եթէ ըսեմք՝ Աստուծո՞ւ տրուած էր, մեզի պիտի ըսէ ինչո՞ւ չհաւատացիք իրեն, իսկ մարդոցմէ էր չենք կրնար ըսել: Այսպէս կ'ըսէին՝ ժողովուրդէն վախճալով, որովհետեւ ամէն մարդ զիտէր, թէ Յովհաննէս ճշմարտապէս մարգարէ էր: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Չենք զիտեր»: Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ. «Այն ատեն ես ալ ձեզի չեմ ըսեր, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

ԿԸ ՀԱՒԱՏԱՊԱՍ...

Մարկոս Աւետարանը կը պատմէ մեզի, թէ ի՞նչպէս քահանայապետները եւ օրէնքի ուսուցիչները մօտեցան Յիսուսի զինք փորձելու համար եւ ժողովուրդը կասկածամիտ դարձնելու նպատակով սկսան անտեղի հարցումներ ուղղել իրեն ըսելով, թէ իր իշխանութիւնը ուրկէ է քաջ գիտնալով, թէ անիկա Աստուծոյ Որդին է եւ երկինքէն իջած փրկիչն է: Այսօր կա՞ն անհաւատ մարդիկ, որոնք կասկածը ունին Յիսուսի իշխանութեան վրայ, չի բաւեր բարձրաձայն յայտարարել, այլ՝ պէտք է ընդունիլ Քրիստոսը մեր կեանքներէն ներս, բանալ մեր սիրտերը Յիսուսի եւ մեր գործերու ցամբով ցոյց տալ Քրիստոսի իշխանութիւնը եւ ներկայութիւնը մեր կեանքին մէջ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏԱՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ



Տասներկու աշակերտներու կողքին, Յիսուս նաեւ կ'ընտրէ 72 աշակերտներ եւ կու տայ անոնց նոյն իշխանութիւնը, զոր տուած էր իր տասներկու աշակերտներուն, աւետարանը քարոզելու, դեւեր հանելու եւ հիւանդներ բժշկելու:

72 աշակերտներուն անունները որեւէ տեղ չեն յիշուիր, սակայն անոնք եւս Քրիստոսի կողմէ առաքելութեան կը դրկուին զանազան շրջաններ:

Տասներկու առաքելներու եւ 72 աշակերտներու նախատիպը կը գտնենք Հին Կտակարանին մէջ, երբ երբայեցի ժողովուրդը անապատային թափառումներու ընթացքին կը հասնին Եղիմ, այնտեղ կը գտնեն 12 աղբիւրներ եւ 72 արմաւենիներ եւ այնտեղ բնակութիւն կը հաստատեն (տե՛ս Ելք 15.27):

Բոլոր Քրիստոնէաները, որոնք Քրիստոսով մկրտուած են եւ Քրիստոսը ընդունած են իրենց կեանքին մէջ, կոչուած են աշակերտ դառնալու մեր Տիրոջ: Ապրինք մեր Քրիստոնէական հաւատքը ամէնօր:

ՄԵՆՔ ՍՈՐՎԵՅԱՆՔ, ԹԷ ԱՍՏՈՒՄԾ ՀՈԳԻ Է ՈՒՐԵՄՆ ՄԱՐԴԸ, ՈՐ ՄԱՐՄՆԱՒՈՐ Է, ԻՆՉՊԷՍ ԿՐՆԱՅ ԱՍՏՈՒՄԾԱՅԻՆ ԴԷՄՔ ԿԱՐ ՊԱՏԿԵՐ ՈՐՄԵՆԱԿ:

Այո, հոգի է Աստուած, բայց ինչպէս, որ սուրբ հայրերը բացատրած են, «Երբ Աստուած ուզէր երեւիլ իր սուրբերուն, ո՛չ թէ ուրիշ կերպարանով, այլ միայն մարդու կերպարանով կ'երեւէր, զոր ստեղծեց իր պատկերին պէս եւ ասիկա պարապ տեղ չէ որ ըրաւ, այլ որպէսզի իր առաւելագոյն սէրը ցոյց տայ մարդոց եւ դարձեալ, որպէսզի սկիզբէն կրթէ, պատրաստէ մարդը գիտնալու, թէ ե՛րբ իր Որդին դրկէ աշխարհ իբրեւ մարդ, տարօրինակ բան մը չհամարեն ասիկա, այլ՝ մա՛նաւանդ գիտնան, թէ ինք (Աստուած) այդ կերպարանով կը յայտնուէր» (Եգնիկ, եղծ Ադանդոց, Ա.ԻԳ.):

Աստուած մարդը իր պատկերով ստեղծեց այսինքն՝ մարդ Աստուծոյ կը նմանի իր հոգիով, որովհետեւ Աստուած հոգի է: Աստուած անձնիշխան (իր կամքին տէր, ազատ) է, նոյնպէս մարդը: Աստուած անմահ է, նոյնպէս անմահ է մարդուն հոգին: Մարդ իր իմացական եւ հոգեկան կարողութիւններով է որ վե՛ր է բոլոր «աշխարհ»-էն (արարածներէն) եւ կը տիրէ անոր վրայ:

Մարդ, երբ կը յարի երկրաւոր բաներու, վա՛ր կը մնայ «աշխարհ»-էն: Այն ատեն կը մերկանայ իր աստուածային պատիւը եւ կը նմանի անասուններուն, այսինքն՝ ան իր ցանկութեան համար կը կռուի խոզ, իր բարկութեան համար՝ շուն, իր յափշտակութեան համար՝ գայլ, եւ այլն (Գր. Տաթեւացի, Գիրք հարցման, էջ 274):

Հ ՈԳԵՒ ՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՄԵՐ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ՍԽԱԼ ՏԵՂ ՉՓՆՏՈՒՆԸ

Ինչպէս մէկը դաշնակ մը առնելով եւ իր տունը դնելով դաշնակահար չ'ըլլար, այնպէս ալ մէկը իր վիզէն խաչ կախելով՝ քրիստոնէայ չ'ըլլար: Չենք կրնար փրկուիլ ո՛չ մեր վիզերէն խաչ կախելով եւ ո՛չ ալ խաչին վրայ կախուելով: Չենք կրնար փրկուիլ ո՛չ եկեղեցի երթալով եւ ո՛չ ալ եկեղեցի հիմնելով: Չենք կրնար փրկուիլ ո՛չ քարոզ տալով եւ ո՛չ ալ քարոզ լսելով:

Չենք կրնար փրկուիլ ո՛չ աղքատներուն օգնելով եւ ո՛չ ալ աղքատանալով: Չենք կրնար փրկուիլ այս կամ այն յարանուանութեան պատկանելով: Չենք կրնար փրկուիլ ո՛չ մեկնաբան եւ ո՛չ ալ աստուածաբան ըլլալով: Չենք կրնար փրկուիլ ո՛չ Աստուածաշունչ կարդալով եւ ո՛չ ալ տպելով: Չենք կրնար փրկուիլ որոշ մեղքերէ կամ բոլոր մեղքերէն հրաժարելով: Կրնանք փրկուիլ միայն Յիսուսը ընդունելով: Ընդունելով, իբրեւ Տէր եւ Փրկիչ:

ԱՌԱԿ 8
«Իմ խօսքերս արդար են, անոնց մէջ ծուռ եւ սխալ բան չկայ: Իմաստութիւններուն համար ամէն ինչ ուղիղ է եւ շիտակ անոնց համար, որոնք գիտութիւն կը գտնեն: Խրատ առէք եւ ոչ թէ արծաթ, գիտութիւն՝ քան թէ ընտիր ոսկի: Իմաստութիւնը արեւի կ'արժէ քան գոհարեղէնները եւ ոչ մէկ թանկարժէք բան կրնայ հաւասարիլ անոր»:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵԹԷ ԻՆՔՉԻՆՔՐԱ ԱՍՏՈՒԾՈՅ Կ՛ՈՒԶԵՍ ՅԱՆՁՆԵԼ, ԿԱՐԿԱ՛Ք Սաղմոս 37

Սիրտդ , մի՛ նեղեր չարերուն համար, ո՛չ ալ նախանձէ անօրէն մարդոց, որովհետեւ անոնք շուտով պիտի խամրին խոտի պէս, պիտի չորանան այնպէս՝ ինչպէս դալար լոյսը կը չորնայ:

Տիրոջ վստահէ եւ բարիք ըրէ, որպէսզի երկրի վրայ ապրիս եւ ապահովութիւն վայելես: Միակ ուրախութիւնդ Տէրը թող ըլլայ, եւ ինք սրտիդ բոլոր բաղձանքները պիտի տայ: Բու կեանքդ Տիրոջ յանձնէ, եւ վստահ եղիր, ան ամէն ինչ պիտի տնօրինէ: Յերեկի պէս պիտի շողացնէ արդարութիւնդ, իրաւունքդ՝ կէսօրուան արեւուն պէս: Լռութեամբ հնազանդէ՛ Տիրոջ, սիրտդ մի՛ նեղեր անոնց համար, որ անիրաւ յաջողութեան կը հասնին, եւ անոնց համար, որոնք չարիք կը նիւթեն: Չսպէ՛ բարկութիւնդ, մէկ կողմ դիր զայրոյթդ, սիրտդ մի՛ նեղեր, որպէսզի դուն ալ չարիք չգործես: Որովհետեւ չարագործները շուտով պիտի կորսուին, մինդե՛ Տիրոջ վստահողները երկիրը պիտի ժառանգեն: Ժամանակ մը ետք՝ ամբարիշտը ա՛լ գոյութիւն պիտի չունենայ: Որքան ալ փնտռես՝ անոր հետքն իսկ պիտի չգտնես: Բայց հեզերը պիտի ժառանգեն երկիրը, եւ կատարեալ խաղաղութիւն պիտի վայելեն: Ամբարիշտը արդարին դէմ դաւ կը նիւթէ՝ անոր դէմ իր ակնքները կրճտելով: Տէրը կը ծիծաղի անոր վրայ, որովհետեւ գիտէ, թէ մօտ է անոր կորուստի օրը: Ամբարիշտները իրենց սուրերը կը քաշեն, իրենց աղեղները կը լարեն՝ նետահարելու համար աղքատն ու չքաւորը, սպաննելու համար ուղիղ վարքով ապրողները: